«Տնտեսագիտություն» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր

Մասնագիտության նկարագիրը

Ամբողջ աշխարհի և ՀՀ աշխատաշուկաներում տնտեսագիտության բակալավրի որակավորմամբ մասնագետների պահանջարկը շատ մեծ է և ամենատարածվածներից մեկն է: Տնտեսագետի մասնագիտությամբ կարելի է աշխատել տնտեսության բոլոր բնագավառներում և ոլորտներում:

Տնտեսագետների պահանջարկը կայուն բարձր է պետական կառավարման մարմիններում, որտեղ տնտեսագետներն աշխատում են տնտեսության տարբեր հատվածներում պետական քաղաքականության մշակման ու կիրարկման համար պատասխանատու նախարարություններում, կոմիտեներում ու գերատեսչություններում: Տնտեսագետների պահանջարկը մեծ է նաև մասնավոր հատվածի ընկերություններում: Տնտեսագետի որակավորումը հնարավորություն է տալիս նաև բացել սեփական բիզնեսը:

Տնտեսագիտությունն ուսումնասիրում է նաև մարդկանց տնտեսական վարքագիծը՝ հիմնվելով վերջիններիս վարքագծային առանձնահատկությունների վրա, որոնց վերլուծությունն իրականացվում է ինչպես թվային մոտեցումների շրջանակներում, այնպես էլ միջգիտակարգային մոտեցմամբ՝ հիմնված տարբեր գիտությունների՝ հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների ձեռքբերումների վրա: Նշված խնդիրների լուծման տեսանկյունից՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությունն ունի անառարկելի առավելություն:

Աշխատանքի հնարավորությունները

«Տնտեսագիտություն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել տնտեսագետի, տնտեսագիտական հարցերով խորհրդատուի, փորձագետի, վերլուծաբանի, միջազգային տնտեսական հարաբերությունների մասնագետի, մակրոտնտեսագետի, հարկերի, մաքսատուրքերի, ֆինանսների, բյուջեի վերահսկման, շուկաների ուսումնասիրության, մրցակցային քաղաքականության, գնագոյացման, էկոնոմետրիստի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տնտեսության մյուս բոլոր ճյուղերի, տնտեսական կանխատեսումների, աշխատանքի տնտեսագիտության, սոցիալական ոլորտի, բնապահպանության բնագավառների տնտեսագետի, սակագնային համակարգերի համակարգողի, կորպորատիվ վերլուծությունների մասնագետների պաշտոններ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, ֆինանսական հատվածի կազմակերպություններում, այդ թվում՝ առևտրային բանկերում, վարկային կազմակերպություններում, ապահովագրական ընկերություններում, արտադրական ձեռնարկություններում, կապի, հեռահաղորդակցությունների,

ծառայությունների, շինարարության, տրանսպորտի ոլորտների ընկերություններում, խորհրդատվական ընկերություններում, հետազոտական կենտրոններում, հասարակական կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում և միջազգային կազմակերպություններում: